# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

26/04/2020

## ՈՐՈՇՈՒՄ N 38-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ <ՎԱՐԱՐԱԿՆ> ԳԵՏԻ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՍԱՆԴԻ-ՁՈՐ ՀԵՂԵՂԱՏԱՐԻ ՆՍՏՎԱԾՔԱՀՈՐԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԳԵՏԻ ՀՈՒՆԻ ՄԱՔՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հետագա հեղեղումներից խուսափելու և գետի հունի մաքրման ու բարեկարգման նպատակով տալ հավանություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի «Վարարակն» գետի վրա Վանքի Տափ թաղամասում կառուցված Սանդի-Ձոր հեղեղատարի նստվածքահորի, հեղեղատարի և գետի հունի հարակից տարածքների մաքրման աշխատանքներին:

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ղեկավարին՝ իր լիազորությունների շրջանակներում, նախատեսված աշխատանքների իրականացման համար, միջնորդել Շրջակա միջավայրի նախարարությանը՝ դրական եզրակացություն ստանալու նպատակով:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԷՐԻԿ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՄՀԵՐ

ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

ՈՍԿԱՆՅԱՆ ՈՍԿԱՆ

ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2020թ. ապրիլի «28»
ք.Գորիս